VTB

25-13

06.02.25

Հավելված 3
«ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/12» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

**ԵՐԱՇԽԻՔ N Ե441-908**

**1.Սույն Երաշխիքը, ինչպես նաև սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/12» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին «Աութսորս»ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02639627) (այսուհետ՝ Պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:**

**2. Երաշխիքով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն (ՀՀ ք.Երևան Մանանդյան փ.33/3) (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) բենեֆիցիարին վճարել 1"800"000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի «900008000466» հաշվեհամարին փոխանցման միջոցով:**

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է Բենեֆիցիարի կողմից **«ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/12»** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակագին մասնակցելու նպատակով Պրինցիպալի կողմից հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված **մեկ հարյուր քսան աշխատանքային օր, բայց ոչ ուշ քան 05.09.2025թ. ներառյալ:** Սույն Երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ Երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն Երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ **hermine.aloyan@escs.am** էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Սույն Երաշխիքի շրջանակներում ցանկացած վճարման պահանջ գրավոր պետք է ներկայացվի Երաշխիք տվող անձին՝ ք. Երևան, Մանանդյան 33/3 հասցեով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը և երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի Մյասնիկյան մ/ճ-ի կառավարիչ՝ Կ. Վիրաբյան

SARGSYAN ARMEN 2611850178

Digitally signed by SARGSYAN ARMEN 2611850178
Date: 2025.02.06 18:14:10 +04'00'

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Մանանդյան 33/3
Երևան 0006,Հայաստան

Միասնական տեղեկատվական ծառայություն
+(3748000)87-87
Ֆաքս` +(3748000)87-87

e-mail :
headoffice@vtb.
կայք`
www.vtb.am